

Համաձայնեցված է  
Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարար

Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի նախագահ

Վ. Գաբրիելյան

Գ.Խաչատրյան



19 հոկտեմբեր 2011թ

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ  
ՀԱՐԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30.09.1997թ., ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները դասվում են ծախսերի թվին: Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կառավարման ապարատի աշխատավարձը ներառվում է վարչական ծախսերի մեջ և դրա գծով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն վարչական ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում: ՀՀ կառավարության 08.06.1998թ. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 352 որոշման 5-րդ կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի համաձայն պարգևատրումները ներառվում են աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մեջ:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Շահութահարկով հարկման նպատակով կառավարման ապարատի աշխատակիցներին տրվող պարգևատրման գումարները ենթակա են նվազեցման կազմակերպության համախառն եկամտից՝ անկախ պարգևատրման հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից համախառն եկամուտ ստանալու հանգամանքից: